

Արձանագրություն 11

2014 թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ամբիոնի վարիչ Ա. Սիմոնյան /

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ամբիոնի վարիչ Բ. Մնացականյան /

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ամբիոնի վարիչ Հ. Մելիքյան /

4.Ընթացիկ հարցեր:

Ա. Սիմոնյանը ներկայացրեց նշված ժամանակահատվածում ԳՊՀ ԲՖ կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնում կատարված աշխատանքների հաշվետվությունը: Ըստ զեկուցողի՝ կրթական ծրագրերը վերանայվել են, առարկայական ծրագրերն արդիականացվել: Կատարվել են էլեկտրոնային ուսուցման <<E-Learning.GSU>> համակարգի համալրման աշխատանքներ: Ուսանողները բարձր արդյունքներ են գրանցել ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքում, որը ամբիոնի հաջող

աշխատանքի արդյունքն է: Ձեկուցողն անդրադարձավ լաբորատորիաների հազեցվածության, լաբորատոր նյութերի ձեռքբերման հարցերին, կարևորեց ամբիոնի կողմից կազմակերպվող գիտաժողովները:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ամբիոնի վարիչ Բ. Մնացականյանը: Նա ասաց, որ շարունակական աշխատանքներ են կատարվում ուսանողների առաջադիմության բարձրացման ուղղությամբ: Ձեկուցողը հանդես եկավ առաջարկություններով՝ միտված կրթական ծրագրերի բարելավմանը և կրթության որակի բարձրացմանը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Մելիքյանը ներկայացրեց 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունը: Ձեկուցողն անդրադարձավ կրթական ծրագրերի բարելավման, «E-Learning.GSU» համակարգում նյութերի ներբեռնման, ուսումնական պլաններում նոր առարկաների նախատեսման և հարակից այլ հարցերի: Նա նշեց, որ ամբիոնում իրականացված ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը ավարտական ամփոփիչ ատեստավորման ժամանակ արժանացել են բարձր գնահատականների: Կարևորեց այն փաստը, որ զարգացման հայեցակարգում հիմնական շեշտը դրված է գործնական պարապմունքների վրա:

ԳՊՀ ԲՖ փոխդեկան Մ. Բադալյանը ներկայացրեց 2014թ. հոկտեմբերին Բրյուսելում կայացած համաժողովի ուղերձը՝ ներկայացված եվրոպական բարձրագույն կրթության մշտական հանձնաժողովի կողմից, որը նպատակ ունի պաշտպանելու Եվրոպայի գիտական և ակադեմիական ներուժը:

ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուսուզյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդին են դիմել ԳՊՀ դասախոս Ա. Հովհաննիսյանը՝ իր և համահեղինակակիցներ Մ. Գևորգյանի, Ռ. Ափրեյանի, Է. Գևորգյանի, Ա. Աթանեսյանի կողմից հեղինակած խնդիրների 2 ժողովածուները՝ «Մեխանիկա», «Մոլեկուլային ֆիզիկա», «Էլեկտրամագնիսականություն», «Օպտիկա», «Ատոմի ֆիզիկա» բաժինների վերաբերյալ, տպագրության երաշխավորելու և ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Ղեջյանը՝ իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու խնդրանքով:

Թ.Ասոյանը նշեց, որ Լ. Ղռեջյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները և ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի գիտական կոչում շնորհելու` ԲՈՀ-ի առաջադրած պահանջներին: Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով /նախագահ` Հ. Ղաջոյան, անդամներ`Պ. Մուրադյան, Ս. Ամիրխանյան / և անցկացվեց փակ /գաղտնի/ քվեարկություն: Քվեարկության արդյունքները ներկայացրեց Հ. Ղաջոյանը. կողմ`28, դեմ` 0, անվավեր` 0:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթները, առաջարկությունները և քվեարկության արդյունքները` գիտխորհուրդը

Որոշեց`

1. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:
3. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
4. Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի աշխարհագրության ամբիոնի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:
5. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
6. Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:

7. Տպագրության երաշխավորել Ա. Հովհաննիսյանի, Մ. Գևորգյանի, Ռ. Ափրեյանի, Է. Գևորգյանի, Ա. Աթանեսյանի կողմից հեղինակած խնդիրների 2 ժողովածուները՝ «Մեխանիկա», «Մոլեկուլային ֆիզիկա», «Էլեկտրամագնիսականություն», «Օպտիկա», «Ատոմի ֆիզիկա» բաժինների վերաբերյալ:

8. ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Ղռեջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում, որոշումը ներկայացնել ԲՈՀ՝ հաստատման:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ.Ասոյան